ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/5.1.2-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. փետրվարի 25-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Ա.Մկրտչյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ |
| Ս.Հովհաննիսյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ |
| Դ.Կարապետյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ |
| Ա.Բաբայան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ |
| Հ.Սահակյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Լ.Բասմաչյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Զ.Հայրապետյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ |
| Շ.Հովսեփյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար |

Քվորումն ապահովված է:

***Լսեցին՝***

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

***Որոշեցին՝***

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

***Լսեցին՝***

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

**Նշվեց, որ**

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 2 (երկու) հայտ՝

- «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի,
- «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

հրավերի 2.4 կետի.

- 1-ին ենթակետով պահանջվող ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից (ոչ ուշ քան 3-օրվա վաղեմության) քաղվածքի ժամկետը չի համապատասխանում պահանջին,

- 8-րդ ենթակետով պահանջվող պորտֆոլիոյում ներկայացված պայմանագրերը միակողմանի են կնքված, բացի այդ՝ չկան պայմանագրերին կից հաշիվներ:

Մեկի՝

- **«Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին, սակայն Ծրագրի ֆինանսական նախահաշվում անհրաժեշտ են որոշակի տեխնիկական շտկումներ, մասնավորապես՝ ԱԱՀ արժեքը չներառել ֆինանսական նախահաշվի տողերում, այն նշել առանձին տողով:

***Կայացավ քննարկում, որի արդյունքում***
***Հանձնաժողովը միաձայն որոշեց՝***

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտը:

2. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝

- **«Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ**-ն:

3. **Առաջարկել «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ**-ին 3-օրյա ժամկետում շտկել Ծրագրի ֆինանսական նախահաշիվը և մրցութային հանձնաժողովին ներկայացնել շտկված տարբերակը:

4. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

- **«Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի** հետ՝ 24 000 000 (քսանչորս միլիոն) (այդ թվում՝ 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ ԱԱՀ) ՀՀ դրամի չափով՝ շտկված ֆինանսական նախահաշիվը ներկայացնելու դեպքում:

5. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

| | | |
|---|---|---|
| Ա.Մկրտչյան<br>(Հանձնաժողովի նախագահ) | - | _____ |
| Ս.Հովհաննիսյան | - | _____ |
| Դ.Կարապետյան | - | _____ |
| Ա.Բաբայան | - | _____ |
| Հ.Սահակյան | - | _____ |
| Լ.Բասմաչյան | - | _____ |
| Զ.Հայրապետյան | - | _____ |
| Շ.Հովսեփյան | - | _____ |